ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «17» մարտի, 2020 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 07-Ա/Ք

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԵՎ «ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՋ ԸՆԴԳՐԿՄԱՄԲ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի 346 Ա/2 հրամանը և առաջնորդվելով 2018թ. մարտի 23-ի «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ կետի 12-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ ՝

1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին (պետի պարտականությունները կատարող՝ Շ.Աղաբեկյան)՝ ապահովել մրցույթի հայտարարության հրապարակումը և մրցույթի հրավերի փաթեթի զետեղումը կոմիտեի ինտերնետային կայքում:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռ. Ասատրյան)՝

1) մրցույթի հայտ ներկայացնող գիտահետազոտական խմբերի ղեկավարների համար կազմակերպել տեղեկատվական խորհրդատվություն,

2) ապահովել մրցույթի հայտերի գիտական փորձաքննության կազմակերպումը,

3) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ գիտական թեմաների ղեկավարներին սահմանված կարգով իրազեկումը,

4) կազմակերպել գիտական թեմաների ղեկավարների հետ պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման պայմանագրերի կնքումը:

3. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ-գլխավոր հաշվապահ Տ. Գալստյան)՝ ապահովել հայտերի գիտական փորձաքննության իրականացման համար անհրաժեշտ միջոցների սահմանված կարգով տրամադրումը:

4. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ